Արձանագրություն 3

«ԳՀԾՁԲ-ՍԿԾ-ՁԻԱՀ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով
սեմինարների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման
գնման ընթացակարգի հանձնաժողովի
բանակցությունների արդյունքների
ամփոփման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 17 հոկտեմբերի 2019թ.
Անցկացման ժամը՝ 11:00
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մարինե Ասրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Սուսաննա Հակոբյան
Ռուբեն Հովհաննիսյան
Արշակ Պապոյան
Նոնա Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գևորգ Խանոյան

I. Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(նախագահ՝ Մարինե Ասրյան)

Հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

N	Մասնակիցներիանվանումները (անունները)	Նախահաշվային գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթիհանրագումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը	Առաջարկված ընդհանուր գինը, առանց ԱԱՀ-ի
1.	2.	3.	4.	5.	6.	7.
Չափաբաժին 1: Գնման առարկա է հանդիսանում՝ Սեմինարների կազմակերպում 1						
1.	**«ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ**	**2361500**	**1925000**	**385000**	**2310000**	**1925000**
Չափաբաժին 2: Գնման առարկա է հանդիսանում՝ Սեմինարների կազմակերպում 2						
1.	**«ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ**	**3247063**	**1908333**	**381667**	**2290000**	**1908333**
2.	«ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ	3247063	2600000	520000	3120000	2600000
Չափաբաժին 3: Գնման առարկա է հանդիսանում՝ Սեմինարների կազմակերպում 3						
1.	«ԷԼԻՏԱ ԷՍՎԵ»	489600	2575000	515000	3090000	2575000

	ՍՊԸ					

1.1 N 1 չափաբաժնի մասով գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից, իսկ N 3 չափաբաժնի մասով մասնակցի առաջարկած գինը գերազանցել է տվյալ գնման առարկայի համար սահմանված նախահաշվային գինը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ հրավիրվել են միաժամանակյա բանակցություններ 17.10.2019թ. ժամը 11:00-ին:

1.2 Բանակցությունների արդյունքում «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ն կատարել է գնառաջարկի իջեցում N 1 չ/բ մասով՝ առաջարկելով 2300000 ՀՀ դրամ: «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չի ներկայացել բանակցություններին:

1.3 Բանակցությունների արդյունքներում մասնակիցների առաջարկած նոր՝ փոփոխված գները ներկայացված են ստորև.

N	Մասնակիցների անվանումները (անունները)	Նախահաշվային գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը	Առաջարկված ընդհանուր գինը, առանց ԱԱՀ-ի
1.	2.	3.	4.	5.	6.	7.
Չափաբաժին 1: Գնման առարկա է հանդիսանում՝ Սեմինարների կազմակերպում 1						
1.	«ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ	2361500	1916667	383333	2300000	1916667

1.4 Հանձնաժողովը որոշեց.

«ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ի և «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար: Հիմնավորում՝ վերոնշյալ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.5 Ընդունել ի գիտություն, որ.

Հայտերի բացումից հետո հանձնաժողովի անդամները հայտարարել են, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ չեն եղել:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

II. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների որոշման և հայտարարման մասին

(նախագահ՝ Մարինե Ասրյան)

2.1 Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, հանձնաժողովը որոշեց.

1-ին տեղ զբաղեցնող ճանաչել՝

- N 1 չափաբաժնի համար «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ին:
- N 2 չափաբաժնի համար «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել՝

- N 2 չափաբաժնի համար «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 N 3 չափաբաժնի մասով գնումը հայտարարել չկայացած՝ բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից գնային առաջարկի նվազեցում չկատարելու պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.4 Ընդունել ի գիտություն, որ.

Բանակցությունների ամփոփման նիստի ավարտից հետո հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով՝

✓ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

III. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(նախագահ՝ Մարինե Ասրյան)

3.1. Հանձնաժողովը որոշեց.

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստն անցկացնել գնահատող հանձնաժողովի անդամների կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի փաստաթղթերի գնահատման թերթիկները հանձնաժողովի քարտուղարին տրամադրելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, հասցեն՝ Աճառյան 2, N 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Մ.Ասրյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Ս.Հակոբյան	_____ (ստորագրություն)
	Ռ.Հովհաննիսյան	_____ (ստորագրություն)
	Ա.Պապոյան	_____ (ստորագրություն)
	Ն.Սարգսյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	_____ (ստորագրություն)